

առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ կատարվեց նախատոնակի արարողություն, որին ներկա էին համայնքային ներկայացուցիչները, Վրաստանի հայ Եկեղեցասեր Երիտասարդաց



Միության անդամները, հավատացյալներ: Երիտասարդների օրհնությունից հետո հավատացյալների մեծաթիվ թափորը հոգեւոր դասի՝ Տեր Սամվել քահանա Թորոսյանի, Տեր Հուսիկ քահանա Հարությունյանի, Տեր Նարեկ քահանա Ղուշչյանի առաջնորդությամբ, Սուրբ Սարգսի տոնը ավետող նկարներով եւ ցուցապաստառներով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմին կից գործող «Հայարտուն» մշակույթի կենտրոնի աշխատակիցներ Լեւոն Զիդիյանի, Միքայել Ավագյանի եւ այլոց մասնակցությամբ շարժվեց դեպի Թբիլիսիի Սուրբ Սարգիս Զորավարի անվան խոնարհված եկեղեցի: Աղոթքի արարողությունից հետո թափորը շարժվեց դեպի Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցի, որտեղ Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ կատարվեց «Խաղաղական եւ հանգստյան» ժամերգություն:

Սուրբ Սարգիս Զորավարի տոնն ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով,

այլև ժողովրդական սովորույթներով: Հավատարիմ նվիրական ավանդույթին, եկեղեցուն
երիտասարդներին բաժանվեցին աղի բլիթներ, քանզի Սուրբ Սարգիս զորավարը
երիտասարդների արագահաս բարեխոսն ու սիրո երազանքն իրականացնող Սուրբ է:
Ամենագոր Արարչի օրհնությունը ստացած եւ Սուրբ Սարգսի շնորհով խանդավառված
հավատացյալները վերադարձան տները: